ԵՐԵՔ ԴԱՐԴԱՏԵՐ[1] / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ժամանակով մի գեղեցիկ իրեք ջահել տղա գնում են աշխատանքի։
Գնում են հասնում մի տեղ, ուր ճամփեն բաժանվելիս ա ըլնում։ Նրանք իրար խոսք են տալի՝ ով որ էլ աղաք գա, ըտտի ճապա պըհի մեկելներնուն. ոնց որ իրար հետ դուս են եկել գեղից, ընենց իրար հետ եդ գան։
Անց ա կենում մի քանի տարի։ Էդ իրեք տղեքն էլ եդ են գալի իրանց նշանակած տեղը, ու ամեն մինն սկսում ա պատմել իր գլխի եկածը։ Նրանցից մինն ասում ա, որ ինքը օխտը տարի Վանա թագավորի կշտին մեհտար էր։ Թագավորը շատ բարեհոգի էր ու ողորմասիրտ։ Ասսու ամեն ըռավոտ նրան տալիս էր հարյուր ոսկի ու հրամայում, որ տանի աղքատնուն փայ անի։ Ինքն էլ թագավորի հրամանը հալալութինով կատարում էր։ Գալիս տեղն էլ թագավորն իրան բազում փող տվուց ու ճամպու տրեց։
Մեկել ընկերնին հարցնում են.— Բա, դու, որ օխտը տարի թագավորի կշտին մեհտար կացար, ու նա քու ձեռով ամեն ըռավոտ փող էր փայ անում աղքատնուն, օրից մի օր չհարցրի՞ր, թե թագավոր, քու դարդն ի՞նչ ա, որ էդ բանն անում ես։
Նա թե.— Չէ՛, ախպեր, իմ սիրտը միամիտ էր, ու մի հետ մտքովս անց չկացավ էտ բանը նրան հարցնելու։
Ու էդ տղեն ասավ ընկերնուն.— Դուք գնացեք տուն։ Ես էլ եդ պտեմ գնալ Վանա թագավորի կուշտը ու նրա դարդն իմանալ։
Գնաց։ Թագավորը հարցուց.— Ընչի՞ եդ եկար։
— Թագավորն ապրած կենա, ես օխտը տարի քու դռանը մեհտար ի ու դուն ամեն ըռավոտ իմ ձեռով փող իր փայ անում աղքատներուն։ Ոնչ դուն օրից մի օր ինձ հարցրիր, թե. «Այ տղա, փողերն ի՞նչ ես անում», ոնչ էլ ես մի օր հարցրի թե. «Թագավոր, քու դարդն ի՞նչ ա, որ էդ բանն անում ես»։ Հմի, թագավորն ապրած կենա, ես եդ եկա, որ ոտներդ ընկնեմ՝ ըղաչանք, պըղատանք անեմ, որ քու դարդն ինձ ասես։
Թագավորը մի խորը հոքոց հանեց ու ասավ.— Է, ախպեր, իմ դարդը ղուլում դարդ ա, քեզ ասելու չի։ Ամա թե կարաս գնալ Բաղդատ, ընդեղ մի հարուստ քոռ բեզրգյան կա, թե նրա դարդը կիմանաս, կգաս ինձ կպատմես, ես էլ իմ դարդը քեզ կասեմ։
Էդ տղեն գնաց։ Օխտն օր քաշեց, օխտն ամիս, թե օխտը տարի, հասավ Բաղդատ։ Հարց ու փորձ անելով գտավ բեզրգյանին։ Սա մի հըլիվոր մարդ էր, միրուքը մինչ ի ծնկները։ Առոք-փառոք նստել էր մի հարուստ խանութի դռան։ Հարցուց, ասին. «Էդ քուչի տներն ու խանութներն նրանն են»։
Մոտեցավ, բարով տվուց, բարով առավ ու իր գլխի էկածը նրան պատմելով՝ հարցուց. «Բեզրգյան աղա, քու դարդն ի՞նչ ա, որ ես իմանամ, գնամ թագավորին պատմեմ, որ նա էլ իր դարդն ինձ ասի»։
Բեզրգյանը մի ծանր ախ քաշեց ու ասավ.— Է, որդի, իմ դարդը շատ մենձ դարդ ա, քիզ ասիլու չի. ամա թե կերթաս Չինումաչին քաղաքը, էնտեղ մենձ քուչի վրա մի կենտու ծառ կա, էն ծառի աղաքին էլ մի դարբնոց, թե էն տեղի դարբնապետի դարդը կիմանաս, կգաս ինձ կասես, ես էլ իմ դարդը քեզ կասեմ։
Էդ տղեն վեր կացավ գլուխը դրուց փեշումն ու ճամպա ընկավ։ Շատ գնաց, թե քիչ, շատն ու քիչը աստոծ գիտի, շատ աշխարներ անց կացավ, շատ չար ու բարի տեհավ, վերջը հասավ

[1] Գրառման ձեռագրում վերնագիրն է՝ «Երեք դարդատեր հեքիաթը»—Ծ. Կ.։

Չինումաչին քաղաքը։ Գնաց կենտ ծառի դարբնոցը գտավ ու ըռավոտահան դուռը կտրեց։ Դարբինն էկավ, մի ծեր մարդ, ամա բոյով, բուսաթով, շենքով, շախ շիաթով, մի տղամարդ։ Էրեսը կլոր, ոնց որ մի տեփուր, աչքերը խոշոր, ճակատը լեն, ունքերը թառ, մի խոսքով ոնց որ ղալամով քաշած մի սրբի պատկեր։ Էկավ դարբնոցի դուռը բաց արավ ու քուրի կրակն էլ վառեց։ Փուքսը փլեց, թեժացրեց, երկաթը դրուց կրակը՝ պաղացրեց, եդ արավ ու հանեց, որ զնդանի վրա ծեծի։ Էդ վախտը աչքը գցեց դպա դուրս, ձեռքերը թիլացան ու մնաց շվարած կանգնած, համարյա անշարժ, անկենդան։
Էդ դրության մեջ նա երկար մնաց։ Կրակը հանգավ, երկաթը հովացավ, օրն էլ անց կացավ։ Էդ քուչով անցնող դարձող մարդիքը թե՛ կնիկ, թե՛ տղամարդ, թե՛ աղջիկ, թե՛ տղա՝ գալիս ին մի քիչ դարբնոցի դռանը կանգնում, դարբնին մտիկ անում ու անց կենում, գնում։ Իրիկունը հասավ, մութն ընկավ։ Դարբինը նոր իրան թափահարեց, ուշքի եկավ, հաջաթը հըվաքեց, դարբնոցի դուռը փակեց ու գնաց դպա տուն։
Էդ տղեն էլ նրա եդևից գնաց։ Տուն մտան։ Տղեն դարբնին բարև տվուց, ներողություն խնդրեց ու գլխի էկածը նրան պատմելով՝ ոտն ու ձեռն ընկավ, ըղաչանք արավ, որ իր դարդն ասի։ Դարբինը նստեց, գլուխը պտտեց, սրտի խորքիցը մի «ախ» արավ ու ասավ.— Անծանոթ ախպեր, իմ դարդը անքննելի, անպատմելի դարդ ա։ Ինձ էրում ա՝ խըրովում, ինձ խաշում ա՝ փթոթում, ինձ հալում ու մաշում. նա հետս պտի մտներ գըրեզման, ոչով չպտի իմանար իմ դարդը. ամա որ դու էդքան նեղություն ես քաշել, ինձ պես դարդվոր մարդիք էլ ես տեհել ու քու ցավը թողած՝ ուրիշնու դարդն ես ուզում իմանալ, կըպատմեմ իմ դարդը։ Ու սկսեց էս պատմությունը.
«Ես որ մորից էլել եմ, շատ սիրուն եմ էլել, սաղ աշխարքը զարմացած ա էլել իմ սիրունութինի վրա։ Հերն ու մերս ախքատ ին։ Կարացին ոչ ինձ մենձ ուսումի տալ։ Ես որ դառա տասնէրկու տարեկան, ամա քսանէրկու տարեկանի բոյն ու բուսաթն ունեի, ինձ տվին դարբնի աշկերտ, հենց էն դարբնոցումը, որ տեհար։ Ես շատ սրտով կպա իմ փեշակին։ Տենողն ասում էր, թե. «Սա ասենք, դարբնությունի հըմար չի ծնած, էսքան սիրուն, արմաղան տղեն, ամա ըվատա, սրանից էլ լավ ուղուփով աշկերտ դարբնության հմար էլած չըլի»։ Ուստես ինձ իր աչքի լսի պես սիրում էր։ Ես հավեսով գործիս կպա։ Ջանս լավ, ես էլ փարթամ, չաքուչը որ առնում ի ձեռս, երկաթն ու պողպատը տակին հալվում ին։ Կարճ ժամանակից եդը ես դառա մենձ ուստա։ Սաղ քաղաքը վրա թափվեց դպա մեր դարբնոցը։ Քսան տարեկան ի, ու իմ համբավը տարածվեց երկրե երկիր։ Էնքան իմ փեշակը չէր գրավում մարդիք, որքան իմ չափից դուրս սիրունությունը։ Իմ դարբնոցի դուռը դառցավ խաչի դուռ։ Սաղ քաղաքի ջահել տղեն ու աղջիկը մի մըհանով գործ ին բերում իմ կուշտը, որ կշտիս կանգնեն ու ինձ թամաշ անեն։ Իսկ քուչով անցնողնին, ով կուզե ըլեր, թե՛ աղքատ, թե՛ հարուստ, թե՛ իշխան, թե՛ թաքավոր, թե՛ մենձ, թե՛ պուճուր, մի քանի վախտ պետք ա կանգնեին, ինձ թամաշ անեին ու անց կենեին՝ գնային։ Ըռավոտվանից մինչի ըրիգուն, մինչի մութը մթնելը իմ դարբնոցի դռանը խալխը կտրվում չէր։ Շատ անգամ տեսնում ի, որ երկնքի ղշերն էլ, մանավանդ մի շատ սիրուն աղունակ, շատ անգամ ին փարվան անում իմ դարբնոցի չորս բոլորքը ու ծառի վրա նստում ծլվլում, խաղ ասում, կանչում։ Իսկ ես առանց աջ ու ձախ մտիկ անելու՝ հավեսով գործի կպած աշխատում ի ու աշխատում։ Աշխատանքս գալիս էր քչքչան աղբրի նման։
Օրեն մի օր գլուխս վեր քաշեցի տեհա, որ մեր դարբնոցի դռանը կանգնած խալխը՝ ինձ թամաշ անելու տեղակ՝ մեր դարբնոցի դռանը բսած կենտու ծառին ա թամաշ անում։ Ես էլ ուզացի տեսնեմ էդ ի՞նչ ա ու դուս էկա։ Ի՞նչ տեսնեմ՝ ծառի վրա վեր ա էկել մի մենձ, հազար ռընգանի սիրուն ղուշ, բըմբուլնին պեծպեծին հուրհուրատին ին տալի, ամեն մինը մի ռանգի, իսկ ղուշը հազար-հազար ռանգի, արմանալի ու զարմանալի սիրուն։

Էդ դուշը ինձ բրավուրդ արավ թե չէ՝ մի դափիլ ալալի պես վրա տվուց, ինձ բռնեց ու թռցրուց։ Ես ուշքից գնացի։ Մին էլ աչքս բաց արի տեսնեմ, որ ինձ վեր ա բերում ծովի միջի մի ադի վրա։ Վեր բերուց դուզ մի բաղի միջին, մի պալատի դռան։ Բաղն էլ ինչ բաղ, ոնց որ երկնային դրախտ։ Հազար տեսակ ծառեր ու պտուղնի, հազար տեսակ երգող թռչուններ։
Աչքդ էն բարին տեսնի, ինչ որ ես տեհա։ Ես շշկլված կանգնած ի պալատի դռանը։ Մին էլ տեսնիմ թևերի խշշոց էկավ։ Պալատի դռանը վեր էկան մի թաբուն աղունակներ ու էն սհաթին դառան աղջկերք։ Դրանք չիմ բոլորի-շուրջ արին էն աղունակ աղջկան, որ ամենից աղաք վեր էկավ։ Դրուստն ասած՝ նա ամենից սիրունն էր ու արմաղան։ Ինչ սիրուն, ես իմ սիրունությունը մտիցս զցել ի, արևին ասում էր՝ դուն դուս մի գալ, ես դուս իմ եկել։ Բոլորը նրա էս կուռն, էն կուռն էին անում։ Էդ աղունակ աղջիկը, էդ երկրային դրախտի տերը, կղզու հրամայողն ու իշխողը, նազով մոտեցավ ինձ, բարովեց ինձ, փաթաթվեց ու պաչեց։ Նա ինձ ասավ. «Մարդու որդի, ես առաջին անգամն եմ սիրում ու քեզ եմ սիրել։ Շատ անգամ եմ քու դարբնոցի դռանը պտիտ-պտիտ արել, ծառի ճղքին վեր էկել ու աչքս քեզ զցած՝ հալվել ու մաշվել։ Վերջը քու սիրով էրված, հակառակ մեր հուրիմալաքների աշխարքի կամքին ու ադաթին, ես ղրկեցի իմ հազար ռանգանի դուշը, որ քեզ բերուց ինձ հըմար։ Դու իմն, ես՝ քոնը միշտ հավիտյան, միայն թե դուն էլ ինձ սիրես մենակ ինձ ու մնաս միշտ հավատարիմ»։ Նրա խոսքերը սիրտս տակն ու վրա արին, իմ սերն էլ նրան կպավ շատ թունդ, ախար, չէ՞ որ ես էլ առաջին անգամ սիրեցի։ Մեկել հուրիմալաք աղունակ-աղջկերքը նրա դիմաց իմ աչքումը ոնց որ ֆող ու մոխիր։
Բանից դուրս էկավ, որ նրանք չիմ նրա ղարավուլնին ին, մենակ մի երկուսն ին նրա հընկերնին, հեռու տեղից եկած։
Ու մենք իրար սիրեցինք անսահման, անհատնում սիրով։ Պսակվեցինք, օխտն օր, օխտը գիշեր հըրսանիք արինք, էլ ի՞նչ կեր ու խում, էլ ի՞նչ ուրախություն։
Իմ կնկա անումը Չնաշխարիկ էր, դրուստ որ նա մի հատիկն էր աշխարքի վրա, արևի տակին։ Նրա նմանը ոնչ գետնի ըրեսին կգտնես, ոնչ եկնքումը. ալամ աշխարքը չարժեր նրա լիս ըրեսին, իսկ խասիաթը հո ոչով չէր ունենալ, ոնչ մարդ աշխարքում, ոնչ հրեշտակ երկնքում։ Նրա հոգու, նրա ներսի սիրունությունը ըրեսի դրսի սիրունությունից տասն անգամ առավել էր։ Ու նա, էն անգին ծաղիկն, իմն էր, ես էլ նրանը։ Իմ կնկա սերին չափ չկար։ Էնա միշտ մի բոպե իմ կշտիցը չէր հեռանում, գլխովս փարվան էր ըլում ու աշխատում էր ամեն կերպ ինձ ուրախ պըհի։ Էլ ոնչ հոգս ունեինք, ոնչ դարդ։ Մեր օրերն անցնում ին, ոնց որ մի քաղցր երազ։ Ամեն բան իմ կընկա հրամանով հազիր էր, ես ոչ մի բանի դարդ չի քաշում։
Ու էսպես սիրով ու բախտավոր ապրեցինք օխտը տարի։ Ունեցանք իրեք տղա, ամեն մինը ոնց որ մի արև։ Մեր բախտին, մեր օրին օր չէր հասնիլ։ Մենք բախտավոր մարդ ու կնիկ ինք ու չափից դուս բախտավոր ծնողնի։ Էդ վախտն էր, որ իմ կնիկը մի աղունակի կտցով հեռու տեղից մի նամակ ստացավ։ Նամակի մեջը գրած էր, որ նրան համեցեք են անում մի ուրիշ սորա[2] իր բարեկամի տղի հարսնիքին։ Ընենց ին խնդրել, որ իմ կնիկը, ոնց որ ինքն ասավ, ճարահատ պտի գնար։ Գնալուց աղաք նա ինձ ասավ.— Այ մարդ ջան, իմ ըրեխեքը քեզ ամանաթ, նրանցով ուրախացի։ Ես էլ մինչի եդ գալս քու ու դրանց, որ քու կտորնին են, սիրով ու կարոտով պտի ապրիմ։
Իմ գնալ գալը կքաշի քառասուն օր։ Միայն մի բան եմ քեզ խընդրում. դու ինձ հավատարիմ կմնաս մինչի իմ գալը։ Ուրիշ չար բան մտքովդ անց չկացնիս։

---

[2] Սորա—կղզի—Ծ. Բ.։

Ու նա վերջին անգամ ինձ փաթաթվեց, ըրեխանցը պաչպըչորեց, աղունակ դառավ թռավ ու գնաց։ Ես իմ կնկա ասածնու վրա մի քիչ զարմացա, մի՞թե կարելի ա, որ նրանից եդը ուրիշի սիրեմ։ Իմ սիրտը թամուզ էր, ոնց որ պարզ ջուրը։ Ու ես իմ ըրեխանց հետ ապրեցի ուրախ ու բախտավոր երեսուն ու հինգ օր։ Վրա երեսունվեց օրը մի չար էկավ, մտավ իմ սիրտը, թե քու Աննման անունով դարավաշին սիրի. նա շատ նման էր իմ կնկանը։ Ես չարին անգաճ չարի։ Մի օրից եդը նա ինձ ախտեց ու ես գնացի դարավաշի կուշտը։
Նա ասաց.— Իմ տեր, էդ անկարելի բան ա։ Շատ էլ, ի՞նչ մեղքս թագցնեմ, ես էլ քեզ եմ սիրում, ամա խանումը իմաստուն ա. նա անպատճառ կիմանա ու ես գլուխը քարը, քեզ սաստիկ պատիժ կտա։
Ես նրան չլսեցի, չարն ինձ բորբոքում էր, ու մեղքս գործեցի։ Եդնա սաստիկ փոշմանեցի, ամա ուշ էր։ Երեսուն ու ինն օրը թըմամեց, քառասուն օրը մտանք։ Աննմանը, որից ես նրանից ետը փախչում ի, եկավ իմ կուշտն ու ասավ.— Էսօր իրիկնադեմ խանումը կգա, նա արդեն գիտի մեր արած մեղքը։ Նա կըգա բարկացած ու քեզ տեսնելուն պես թևով կտա կսպանի։ Որ քո արինը ընկած չըլիմ, քեզ խորհուրդ եմ տալի, որ պուճուր տղիդ առնես խտիտդ ու դռանը կանգնես։ Խանումը, որ գա կտեսնի ըրեխեն ձեռիդ ու ղիմիշ չի անիլ, որ քեզ սպանի ու նրանից ետը, թե քեզ ի՞նչ կանի, էլ կարող չեմ ասիլ։
Ասավ ու գնաց։ Ես էնպես էլ արի։
Նա՝ Չնաշխարիկը, իմ կնիկը եկավ։
Հեռվից թևերի ղժժոցն իմացա ու տեղն ու տեղը, պուճուր տղեն խտիտս՝ չորացա, հանգա։ Մին էլ էն իմացա, որ ինձ թոցընում են։ Աչքս բաց արի, տեհա, որ էն հազար ռանգանի ղուշը դարբնոցի դռանն ինձ ուսուլութով վե դրուց ու ինքը թռավ եդ գնաց։
Էն օրից էս օր տարիներ են անցել, թե ինչեր եմ քաշել, էդ աստոծ գիտի։ Էսօր ինձ տե՞հար. էդպես շատ անգամ, երբ կնիկս ու ըրեխեքս միտս են ընկնում, բանը ձեռիցս ընկնում ա, ձեռներս թուլանում են, ես ուշքից գնում եմ ու մենակ մի բան ա պտտվում մտքումս, թե. «Յարա՞բ մի օր իմ կնիկը ինձ վրա չի՞ խղճայ, քաշածս պատիժը բոլ չի՞ համարի. չի՞ ղրկիլ արդեոք իր ղշին, որ գա ինձ տանի, որ կնկաս ու ըրեխանցս կարոտն առնիմ ու ետո մեռնիմ»։
Դարբինը վերջացրեց։ Տղեն վեր կացավ, ձեռքը պաչեց ու սուս ու փուս դուս էլավ։ Դարբնի դարդը Չինումաչինից բերուց Բաղդատ քոռ բեզրգյանի կուշտը։
Ծեր բեզրգյանը պատմեց իր դարդը.— Էս սաղ քուչի տներն ու խանութնին տենում ես. էդ չիմ իմն ա։ Էդ բոլորը ես իմ հալալ ըշխատանքով եմ հըվաքել։ Իմ ծնողնին աղքատ ին։ Ջահիլ վախտս ես մտա մի բեզրգյանի մոտ աշկերտ։ Իմ աշխատասիրությունով, աչքաբացությունով ու ղոչաղությունով, կարճ ժամանակում նրա աչքի լիսը էլա։ Աշխարնի շատ ման էկա, ամեն տեղից մենձ օգուտով եդ դառա, շատ գանձ, շատ հարստություն դիզեցի։ Էս քաղքումը, էս երկրումը ես էլ մի անումով մարդ դառա։
Մի օր էկավ իմ կուշտը մի տերտեր ու ասավ.— Բեզրգյան ախպեր, ես մի տեղից բան ունիմ բերելու, խնդրում եմ ինձ քառասուն ջորի տաս քրեհով։ Քրեհն էլ ինչքան ուզում ես, ուզի, մինն էրկուսով կտամ, ամա մի խնայի։
Ես համաձայնվեցի։ Օրով բարըշեցինք։ Թե՛ մի ջորու քրեհը մի օրն արժեր մի մանեթ, ես ուզեցի հինգ մանեթ։
Տերտերը ինչ ուզեցի չէ չասավ, ամա խնդրում էր որ ջորենին թեզ ղրգեմ։
Ըդթավուր վախտը՝ քրեհ էլած վախտը, ես իմ նոքարնուն, ղուլլուղչըքերին ի ղրկում։ Ամա էս անգամ մտքովս մի բան կացավ, ու ես էլ հետները գնացի։
Տերտերը նստեց իմ սպիտակ ջորուն, ընկավ քարավանի աղաքը ու գնաց։ Մենք էլ նրա ետևից գնացինք։ Ճամպեն գնում ինք սուս ու փուս։ Էլ մեր մեջ ոչ մի խոսք ու զրից չելավ։ Տերտերը

միալար քշում էր ջորին ու քշում, իր մտքի հետ կռիվ տալով։ Մենք էլ աչքներս նրան գցած՝ գնում ինք ու գնում։ Շատ գնացինք թե քիչ, մեր դեմն էլավ մի դալին մերի։ Մենք մտանք էդ մերու մեջը։ Ճամպեն կամանց-կամանց նեղանում էր։ Քիչ եդո համարյա կտրվեց։ Մենք դժար անցանելի կածաններով աղաք գնացինք, վերջը դեմ էլանք մի մենձ, շատ բարձր քարափի, որ մեր աղաքը կտրեց, էլ դենն անց կենալու տեղ չկար։
Տերտերը վեր էկավ ջորուց, ծոցիցը գրեր հանեց, աղոթքնի արավ։ Մին էլ դափիլ քարափը ճեղքվեց, ետ բացվեց։ Տերտերը նշան արավ։ Աղաք գնացինք։ Ի՞նչ տենանք, աչքդ էն բարին տենա։
Մի տեղ ոսկի կիտած, մի տեղ անգին քար, լալ ու ջավահիր, յաղութ, զմրուխտ, իսկ մարջանին ու էրծաթին չափ չկար։ Տերտերը հրամայեց, ու մենք ջվալնին լցրինք, բեռներ կապեցինք։
Ամեն մարդ ում սիրտն ինչ որ ուզեց, իր բեռն ընդուց բռնեց։ Ես իմ բեռը անգին քարով բռնեցի։
Տերտերն էլ մենակ մի տեղից մի պուճուր ղութի վե կալավ, բալնիքը վյրեն, պաչեց ու դրեց ծոցը։ Ամեն բան թողած՝ էդ ղութին իմ ուշքը տարավ։ Չիմացա էն ի՞նչ բան էր. ակն ու մարգարի՞տ էր, անգին քարի՞ց էր, թե ի՞նչ էր, լսի պես փալփլում, հուրհրատին էր տալի։
Եդ դառանք։ Տերտերն էլեդ ընկավ աղաք։ Քարավանը ժաժ էկավ ու մենք մեր գնացած ճամպով եդ էկանք։
Ճամպին իմ մտքով հազար ու մին բան էր անց կենում։ Իմ մտքումն ասում ի. «Տերտերն էսքան գանձը՝ հարստությունը ի՞նչ պտի անիլ։ Նրա ընչի՞ն ա պետք։ Նրա բանն ա ասսու հետ խոսա, իր աղոթքն անի, աշխարքի փառքից ու պատվից փախչի, աշխարքի հըմար խաղաղություն խնդրի, էլ ուրիշ ոչինչ։ Տերտերն ի՞նչ, էսքան գանձն ի՞նչ»։
Եդո հաշվում ի, որ ինչքան էլ քրեհ վեր ունիմ, քանի օր էլ քաշած ըլի, էլի մի հակը իմ քրեհումը ինձ չի հասնիլ։ Էդ վախտը մի չար էկավ մտավ իմ սիրտը, ու ես ինքս ինձ ասի. «Արի տերտերից իմ քրեհումը մի հինգ բեռն էլա վերցնիմ»։
Տերտերն իմաստուն էր, ի՞նչ էր, իմ միտքը հըսկացավ, եդ դառավ ու ինձ ասավ.— Բեզրգյան ախպեր, էդ ա քու մտքովն անց կացավ, ես էլ համաձայն եմ, մի հինգ բեռը քո քրեհումը քեզ կտամ։ Ամա ըստուց եդը ուրիշ չար բան անց չկացնես մտքովդ։
Քիչ աղաք գնացինք։ Չարն էլ եդ եկավ մտավ սիրտս ու մըտքովս անցավ։ «Հինգ բեռը քիչ ա, գոնյա տասը բեռը վերցնեմ»։
Տերտերը էլ եդ հըսկացավ, եդ դառավ ու ասավ.— Լավ, ախպեր, տասը բեռը քեզ ըլի, ամա էլ չար բան չմտածես։
Ես ուրախացա։ Մի քիչ էլ որ աղաք գնացինք, չարն էլ եդ ինձ դրդեց. «Ախպեր, մնացած երեսուն բեռը՝ էդ անքուն ցեցը, տերտերս ի՞նչ կանի։ Գոնյա կեսն ինձ ըլի, կեսը— նրան»։
Տերտերն էլ եդ հըսկացավ, եդ դառավ ու ասավ.— Բազրգյան, թող քո ասածը ըլի. քսան բեռը քեզ, քսանն՝ ինձ։ Նենց իմանանք ախպեր ինք, հալալ ախպոր նման կես անինք։ Եբոր թամահը էդքան քեզ աղտում ա, ես չեմ հակառակիլ։ Ամա էլ ըտուց դենը անց չկենաս։
Տերտերի կակուղությունը ինձ ավելի էրես տվուց, ու, առանց բալնիքը պտտեց, ու ղութին բացվեց..... Էնպես մի լիս, մի տաքություն դուս էկավ էնտեղից, որ իմ աչքերը էրեց, աչքերիս մեջը պեծեր թափվեցին, աշխարքը գլխիս պտիտ էկավ ու ես ուշաթափ ընկա գետին։
Շատ անցավ, թե քիչ, ես ուշքի էկա, մին էլ իմացա անգաճնիս քաշում ին, ըրեսովս սառը ջուր են տալի։ Աչքս բաց արի, որ տեսնեմ՝ էդ ի՞նչ ա, բան չի բրավուրդ արի, աչքիս լիսը գնացել էր։
Հարցրի.— Էդ ի՞նչ մարդիկ եք։
Ասին.— Ճամպորդ ենք, տեհանք քեզ ըստի ուշաթափ ընկած, ուշքի բերինք։
Հարցրի. «Տերտերն ի՞նչ էլավ, բեռներն ի՞նչ էլան»։
Ասին. «Ի՞նչ բեռ, ի՞նչ տերտեր»։

Ես է՛լ բուսուս բաց չարի, սուս կացա ու ասի.— Ես ֆլան բեզրգյանն եմ, խնդրեմ ինձ տուն հասցնեք։
Էն օրից էսօր տարիներ են անցել։ Ոչով չգիտի իմ կուրանալու պատճառը։ Էլ առաջվա պատիվն ու հարգը ինձ տալիս են։ Ամա իմ սիրտը չի ուրախանում։ Չափից դուս թամահը ինձ էստեղ գցեց։ Աշխարքը ինձ հըմար հեչ ա, եբ որ աչքի լըսից զրկված եմ։ Միշտ ըստեղ նստած մի միտք եմ անում. «Յարաբ Աստոծ իմ մեղքը չի՝ ներիլ, յարաբ տերտերը մի օր ինձ չի՞ խղճա, չի՞ գա արդյոք իմ աչքերի լիսը էլի եդ բերի»։
Ասավ ու լռեց։
Տղեն վեր կացավ, սուս ու փուս բեզրգյանի ձեռքը պաչեց ու գնաց։ Նա դարբնապետի դարդը Չինումաչինից, Բեզրգյանի դարդը Բաղդատից բերուց Վան քաղաքը թագավորին։
Թագավորն էլ պատմեց իր դարդը.— Ամենից աղաք քեզ պտեմ ասիլ էն, ինչ որ աշխարքը չգիտի։ Ես ոչ թե տղա, այլ աղջիկ եմ։ Իմ հերը էս աշխարքի թագավորն էր, ես էլ նրա մինուճար զավակը։ Անբախտ մերս ինձ բարուրումն ա թողել, ու ընդուց եդը ես դառել եմ սգվոր, հորս միակ ցավն ու հոգսը, հույսն ու մխիթարանքը։ Աչքս բաց արի փարթամության մեջ։ Ոչ մի բանի կարոտություն չունեի։ Հենց որ դառա յոթնութ տարեկան, իմ հերը բերուց թե՛ էս աշխարից, թե՛ հեռու աշխարնուց գիտնական իմաստուն մարդիք, որ ինձ ուսում տան։ Մինը սովորացնում էր աստղաբաշխություն, մինն էլ՝ պատմություն։ Բայց ամենից շատ ես սիրեցի սրտի ուսումը՝ ավետարանը։ Ու նրանից եդը ես ասում էի. «Պտեմ աշխատիլ, որ մեր ռհաթը սիրով ու հանգիստ ու խաղաղ ապրեն»։ Եբ հասակս առա, էդպես էլ արի։ Իմ խնդիրքով հերս իր գանձի դուռը բաց արավ, ու ես հիմնեցի ուսումնարաննի, աղքատանոցնի, ժամեր ու վանքեր։ Շատ անբախտնի ըրտասունք ըրեսիցը սըրբեցի, շատ աղքատնու մի կտոր հացի տիրացրի, շատերին էլ չար ճամպից եդ դարձրի։ Կարճ ժամանակում մեր աշխարն ինձ սիրեց, ու ես ամենի աչքի լիսը դառա։ Իմ հերն էլ հո իմ բոլոր խնդիրքնին կատարում էր, իմ ոչ մի խոսքը գետին չընկավ։ Ես դառա մեր ռըհաթի խոսքն ու զրիցը, թե՛ մենձ, թե՛ պուճուր ճընանչում ին ինձ ու իմ արևովը երթում ուտում։
Իմ թագավոր հերը ամեն հետ ինձանով պարծենում էր ու համեշա իմ խորհրդին անգաճ էր պհում։ Նա միշտ ամեն օր ճաշերին, ինչքան էլ գործ ունենար, գալիս էր իմ կուշտը, հետս մը քիչ զրից անում ու եդո գնում։ Իմ կյանքը ուրիշներու հըմար եդ դրած՝ ես անց ի կացնում իմ օրերը ուրախ ու բախտավոր։ Իմ սիրտն էլ անմեղ էր ու թամուզ, ոնց որ ձմեռվա էկած նոր ձինը, ոնց որ ամառվա պարզ գիշերը, ոնց որ երկնային ցողն ու արևը։ Մինչի որ մի անցք իմ կյանքը փոխեց ու ես քաշեցի դառն ու սև օրեր։
Մի օր ես կառք նստած անց ի կենում մեր քաղքի մի մենձ քուչով։ Ամենքն, իհարկե, ճանաչում ին ինձ, ամենքը խոնար բարովում ին ինձ։ Մի զարգյարի խանութի դռանը կանգնած էր մի ջահել ու սիրուն տղա, որն ինձ բարովեց ծիծաղն էրեսին։ Ես անց կացա, ամա նրա պատկերը սրտումս տպվեց։ Որտեղ գնացի, ինչ էլ որ արի, ուշքս ու միտքս նրա վրա էր։ Ճամպեն եդ գալիս՝ մատանին կոտրեցի ու հենց որ հասա զարգյարի խանութին, վեր էկա, տուն մտա, մատանին տվի զարգյարին, որ շինի։ Էն տղեն էլ ընտեղ էր։
Զարգյարին հարցրի.— Ո՞վ ա էս տղեն։
Զարգյարն ասավ.— Էս իմ տղեն ա, թագավորի աղջիկ, ձեր ծառեն, սա մեր մինուճարն ա, իմ ու իրա մոր աչքի սևն ու սպիտակը։
Ես հարցրի.— Ե՞րբ հազիր կլինի իմ մատանին։
Նա ասավ.— Էգուց ըռավոտ։
Ու ես խնդրեցի.— Էգուց ըռավոտ մատանին կղրկես պալատ քու տղի ձեռով։
— Աչքիս վրա, թագավորի աղջիկ,— ասավ զարգյարը ծիծաղն էրեսին։

Ես գնացի տուն, ու էն գըշերը քունս չտարավ։ Զարգյարի տղի պատկերը աչքիս ըղաքից հեռանում չէր։
Անհամբեր սպասում ի լիսանալուն, թե ե՞ր նրա երեսը կտեսնեմ, հետը կխոսամ։
Ասում ի. «Յարաբ նրա էրեսնու գյորա սիրտն էլ սիրո՞ւն ա, յարաբ նրա սիրունությունունու գյորա խելքն ու քյամալն էլ տե՞ղն ա»։
Էգուցն էսօր դառավ, ու ես աչքս գցեցի դուս։ Մին էլ տենամ, իմ ղարավաշնին էկան, ինձ ասին.— Մի սիրուն տղա, դռանը կանգնած, ոսկե սինին գլխին, քեզ հըմար ծածկած մի բան ա բերել։
Ասի.— Թողեք, որ տուն գա։
Էկավ էն տղեն, ոսկե սինով մատանին ըղաքիս վե դրուց, խոնար բարովեց ու ամանչելով գլուխը կախ կանգնեց ըղաքիս։
Ես ձեռիցը բռնեցի, կշտիս նստացրի ու սկսեցի հետը զրից անել. ուզում ի փորձեմ իմանամ նրա խելքն ու շնորհքը, խոսքն ու զրիցը, սիրտն ու հոգին։ Ու մենք վեր վառեցինք մի քաղցր զրից։ Էն աղի խոսքերը խելոք ու լավը՝ ու ինքն էլ հետը սիրուն չափած ու ձևած, ուշքս տարել ին։ Չի իմացել, թե ժամանակը ո՞նց ա անց կացել։ Մին էլ տենիմ դռանը ոտնաձեն էկավ։ Վռազ դուս մտիկ արի՝ ճաշ էր դառել ու իմ թագավոր հերը ինչպես ամեն վախտ, գալիս էր իմ կուշտը։ Սիրտս լքլքաց, ես շատ վախեցի, ոնց որ մի մենձ հանցանք իմ արել։ Մտքովս անց կացավ. «Հերս ի՞նչ կասի, եբ որ էս ջահել տղեն իմ կշտին տենի»։
Եդ դառա վռազ, սնդուկս բաց արի ու էն տղին ասի. «Հերս՝ թագավորը, գալիս ա, արի խնդրում եմ, սնդուկը մտի, մինչի որ նա գա ու գնա»։
Խեղճ տղեն անխոս հնազանդվեց։ Ու ես սնդուկի խուփը վրա բերի։ Հերս տուն մտավ։ Ամեն հետվա պես ճակատս պաչեց, կըշտիս նստեց, զրից արսրվ, քեֆս ու հալս հարցրեց ու եդ գնաց իր բանին։
Մինչի հերս դուս էլավ, իմն էլ ինձ հասավ։ Վրա վազեցի սնդուկը բաց արի ու սարսափեցի։ Խեղճ տղեն տեղն ու տեղը մեռել էր, հանգել. Վռազելուցս սնդուկի խուփը դայիմ ետ ի արել, դիպել էր խեղճ տղի գանգին ու տեղն ու տեղը հանգցրել։ Մնացի սառած, քար կտրած։
Արտասունքն աչքերումս՝ ինքս ինձ ասում ի. «Էս ինչ բան էր, տեր աստոծ, ընչի՞ էս խեղճ տղի արինն ընկա, էս ի՞նչ ծանր մեղք էր, որ ես գործեցի։ Հմի ի՞նչ անեմ, ո՞նց անեմ։ Թե հայտնեմ հորս, խայտառակությունն ավելի կըլի։ Աշխարք կիմանա ու կզարմանա։ Ինձ ինչպես են ճանաչել ու ինչ դուս կգա, շատ էլ իմ արածը մի անմեղ խաղ էր, որ էս խեղճ տղի արնով վերջացավ, ամա ինչ կասի խալխը, որ էս բանն իմանա։ Ո՞վ գիտի՝ հազար ու մի տեսակ բամբասանք կանեն ու ես կդառնամ մի մատը մեղր։ Էլ կարող չեմ ես լիս աշխար դուս գալ։
Չիմն էլ զզվանքով մատով շանց կտան ու կասեն. «Էս սուտ ճգնավոր աղչկանը տեհեք, դուռը խալխին լավութին ա անում, իսկ իրանց տանը աննամուս բաներ»։ Օ՛, լավ է ես էլ սրա հետ մեռնիմ, ես էս նախատինքը կարող լչեմ տանել»։
Ու հազար ու մի տեսակ միտք ի անում, որ մի ճար, մի հնար գտնեմ, ամա ճամպա չի գտնում։ Արտասուքներս թափվում ին սելավի նման ու էրեսս վառում, էրում, խըրովում։
Մութը վրա հասավ, ու ես վերջապես մի բան միտք արի։ Իմ թագավոր հերն ուներ մի արաբ մեհտար։ Ես ինչ աչքս բաց ի արել, նա մեր տանն էր։ Շատ ճշմարիտ ու հավատարիմ ծառա էր։ Հերս՝ թագավորը նրան շատ էր հվատում ու հըվանում։ Պալատում էնա ամենքը նրան ասում ին. «Էհտիբարլու արաբ»— հավատարիմ արաբ։ Տխուր սիրտս մի քիչ ուրախացավ, եբ նա միտս ընկավ, ասի. «Կկանչեմ մեր էհտիբարլու արաբին, նա էս բանը հենց կծածկի, որ ոչով չի իմանալ, իմ նամուսն ու պատիվն էլ կմնա տեղը»։

Ասի ու արի։ Կանչեցի արաբին ու եղելութինը նրան հայտնեցի։ Նա ինձ սիրտ տվուց, միամտացրեց ու ասավ. «Միամիտ կաց, թագավորի աղջիկ, ես ձեր տան հավատարիմ ծառան եմ, դուն իմ խտտին ես մենձացել, ես գլուխս մահու կտամ ու թողալ չեմ, որ դրա հրմար քո էրեսը մի նախատինք գա»։
Ու նա վերցրոլց էն մեռած տղի դիակը դրուց մի ջվալի մեջ ու տարավ թագուն ճամպով ծովը գցեց։
Մյուս օրը, եբ զարգյարը հարց ու փորձ էր անում իր կորած տղի հմար, արաբն ասել էր, որ նա մատանին բերուց ու թեզ եդ գնաց ու թե եդո նրան տեհել էր քաղաքում մի քանի հընկեր տըղերանց հետ քեֆ անելիս։ Ըտենց մի քիլ դինջացա, արխեյնացա. մեր հավատարիմ արաբը իմ պատիվը փրկեց։
Ամա քունս փախավ, դարարս կտրեց, ու ես տանջվում ի, որ էն խեղճ ու անմեղ տղի արինն ընկա։ Էրեսիս գույնը թռավ, իշտահս կապվեց, ու ես էլ տանից դուս չի գնում։ Ամեն հետ, եբ թագավոր հերս գալիս էր իմ կուշտը, ըրեսիս մտիկ էր անում ու հարցնում.— Քեզ էդ ինչ ա պատահել, որդի, ընչի օրէց օր դուն մաշվում ես, քու դարդ ի՞նչ ա, ասա, աղջիկս, ես մի ճար, մի հնար կանեմ։
— Ոչինչ, հայրիկ, ինձ բան չի պատահել։ Մի օր քուչով անցնելիս ես մի տխուր բան տեհա, սիրտս նեղացավ, ընդուր վրա մը քիչ քեֆս խարաբ էլավ։ Էդ ոչինչ, անց կկենա, հայրիկ, դուն հանգիստ մնա, քեզ պես ազիզ թագավոր հայրիկ ունիմ, էլ ի՞նչս ա պակաս։ Դուն գիտես, որ իմ միակ դարդն ու հոգսը մեր խեղճ ռըհաթն ա։
Հերս գլուխը պտտում էր, ճակատս պաչում ու դուս գնում։ Էդպես անց կացավ մի քիչ ժամանակ։ Իմ հանգստությունը կամաց-կամաց տեղն էկավ։ Էլ եդ սկսեցի իմ աղաքվա գործերին կենալ։ Ամա դինջությունս երկար չքաշեց։ Մի րիգուն «էհտիբարլու» արաբն էկավ իմ կուշտը ու դեմ ու դեմն ասավ. «Թագավորի աղչիկ, քեզ շատ եմ սիրում, պետք ա գլուխդ հետս մին անես»։ Ես սարսափեցի, մի դողմանիկ ընկավ ջանս ու կմկմացի.— Էդ ի՞նչ ես ասում, հավատարիմ արաբ, բա դուն խիղճ չունի՞ս։ Էդ ոնց կըլի։ Դուն իմ հոր տեղն ես, ես քո որդու տեղն եմ։ Ամոթ ա, աստոծ կպատժի քեզ, էդ չարը մտքիցդ հանի ու դուս գնա, հեռացի էստեղից։
Արաբը սըտանի աչքերով ինձ մտիկ արավ ու ժընները բաց արած՝ լրբաբար ասավ. —Կամքս կկատարես՝ լավ, թե չէ՝ ամեն բան ես աշխարքով մին կանիմ։ Քու գաղտնիքը ամեն տեղ կասեմ։ Բանը բաց կանեմ ու դուն էլ, մին ա, խայտառակ կըլիս։ Լավն էնա սուս-փուս կամքս կատարես։ Քեզ տալիս եմ երեք օր ժամանակ, վճռիր ոնց կուզես։
Ասավ ու դուս գնաց։ (Գնալն ըլեր, գալը չըլեր)։ Ու ես իրեք օր սաստիկ տանջվեցի։
Իրեք օրեն վրա սև օձն էկավ ու ինձ ասավ.— Թագավորի աղջիկ, էս րիգուն, սրանից մը քիչ աղաք, ես քաղաքումն ի։ Իմ ծանոթ իրեք տղա իրանց սիրեկաննու հետ էն ֆլան տեղը քեֆ են անում։ Արի ես ու դուն էլ գնանք, ընտեղ քեֆ անենք։
— Հավատարիմ արաբ, դուն բեր, խղճմտանք արա, էդ չար մտքիցը ձեռը վե կալ։ Ինչքան փող ու գանձ, հարստություն ուզում ես, ես կասեմ՝ հայրիկս կըտա, թաք դուն, թե աստոծ սիրես, էդ չար մտքիցը եդ կանգնի։ Նա թե.— Չէ, անկարելի բան ա։ Էս րիգուն, թե ասածս կատարեցիր, լավ, թե չէ, մախսու ես իմ գիտեցածը կանեմ։
Տեհա ճար չկա, սիրտս էփում էր, մի բան միտք արի ու նրան ասի.— Լավ, եբ որ ըթենց ա, քու սիրտը քար ա, մի կես սհաթ ինձ ժամանակ տու, որ ես շորերս փոխեմ, հագրվեմ ու արի գնանք։

Նա ուրախ-ուրախ դուս գնաց։ Ես վե կացա, թագավոր հորս ալմաստե ղամեն շորերիս տակ կապեցի, շորերս փոխեցի, լավ պաշարեղեն ու հորս մառանիցն էլ մի քանի շիշ օխտը տարեն հին գինի վե կալա ու հազրվեցի։
Արաբն էկավ ու մենք գնացինք։ Քաղքի ղրաղին մի կենտու տուն կար. ընտեղ արաբի ասած իրեք տղեն իրանց սիրեկաննով քեֆ ին անում։
Եբ որ արաբի հետ նես մտա, նրանք հա՛մ զարմացան, հա՛մ ուրախացան։ Նրանք տեղներիցը վե թռան ու գոռգոռացին.— Դուն բարով էկար, հազար բարի, թագավորի աղջիկ, մեր արաբի հետ մեր աչքի, մեր գլխի վրա տեղ ունիս։ Համեցեք, համեցեք դպա վերև էկեք։
Ու ես բազմեցի արարի կողքին, ամենքի գլխին։ Երեսիս ամոթը եդ արի ու սկսեցի նրանց հետ քեֆ անել։ Էրեսանց ըթենց, ամա տականց սիրտս էփ էր գալի։ Որ էն անպիտան արաբը ձեռը ճտովս էր զցում, հենց իմանում ի, թե մի սև օձ փաթաթվեց շըլնքովս։ Ամա ի՞նչ արած, ես առերես ուրախ՝ ներսից սիրտս զայրացած՝ սկսեցի նրանց ղայդի կեր ու խումը։ Թե նրանք մի թաս գինի ին վեր առնում, ես՝ երկուսը, ամա մինն էս կողքով, մինն էն կողքովս ծածուկ վեր ի ածում ու էնպես ձևացնում, մթամ թե խմում իմ։ Նրանք ավելի գոռգոռում ին ու ինձ գովում, հա գովում։
Քեֆի էն թունդ վախտը ես ղափիլ վե թռա ու բարձր ասի.— Վա՜, ախըր սիրելիք, ես ձեզ հըմար պաշար եմ բերել, լավ գինի եմ բերել մեր մառանիցը. ոնց ա մտիցս ընկել է... Ասի ու վազեցի, պաշարը բերի՝ օխտը տարվա հին գինու հետ սուփրի վրա շարեցի։ Ես զոռ ի անում, էդ հին գինին նրանց խմացնում։ Չիմն էլ, ինձանից եդը, խմեցին, հարբեցին ու ըստեղընտեղ վեր ընկան։ Արաբը նրանցից օխտը ղաթ անց էր կացել։
Հենց էդ վախտը ես իմ նամուսը, իմ պատիվը փրկելու հըմար՝ մի սարսափելի գործ կատարեցի։ Փեշիս տակից հանեցի հորս ալմաստե ղամեն ու կտաղած վրա ընկնելով՝ էդ օխտին էլ, աղաք արաբին ու էն վեցին էլ հետը, մորթեցի, շլինքնին կտրեցի, ու ինքս ինձանից սարսափած՝ մինչի մեր տունը, մեր պալատը մին փախա։ Քիչ էր մնում գժվեմ, որ ես իմ անմեղ, անարատ ձեռով օխտը մարդու սուր քաշեցի։ Դրանց վրա էլ ավելացրու զարգարի տղի ցավալի մահը, որի պատճառը ես ի, ու բանից դուս կգա, որ ութը մարդի արինը գոլ ա տված իմ սրտումը։
Նրանից եդը աշխար ինձ համար ոչինչ դառավ։ Բախտավորություն կորավ ինձնից։ Դրուստ ա՝ իմ գաղտնիքը ոչով չիմացավ, ամա ես՝ իմ աչքից գցելով բոլոր մարդերանցը՝ վճռեցի, որ աշխար չմտնեմ։ Ու հաստատ մնացի իմ վճռին։ Թագավոր հերս էդ դարդից մեռավ, ու ես նրա տեղը թագավոր դառա, շորըս փոխեցի, տղամարդի շոր հագա ու տղամարդու պես գործ կատարեցի։
Էդ բանը իմացան մենակ իմ մոտիկ պալատականնին, որ հըմի չըկան։ Իմ ժողովուրդը, սաղ աշխարքը, հենց գիտի, թե ես տղամարդ եմ։
Ամա էն օրից, որ օրից որ թախտս բարձրացա, ես ամեն ըռավոտ հարիր ոսկի փայ եմ անում ախքատնուն, ինչպես էդ արել եմ քու ձեռով օխտը տարի։ Ու միշտ ամեն օր մի միտք եմ անում թե. «Յարաբ աստոծ՝ էսքան ողորմություն տալուց եդն էլ, էսքան ապաշխարանք քաշելուց եդն էլ իմ մեղքը կների, թե չէ՞»։
Ու մեր դարդ իմացող ախպերը՝ շալակած դարբնապետի դարդը Չինումաչինից, բեզրգյանի դարդը՝ Բաղդատից ու թագավորի աղջկա դարդը՝ Վանից ու թագավորի իրեն տված մի բուռ ոսկին էլ հետը, գնաց իրանց տուն։
Աստված բարի ճամփա տա։